ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2017

02.2017
Փետրվար

03.2017

04.2017

05.2017

06.2017

07.2017

08.2017

09.2017

10.2017

11.2017

12.2017

ՀՀ կենտրոնական բանկի

Թողարկման 24-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2017

Փետրվար

թիվ 2 (222)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Կարեն-5» արտադրական կոոպերատիվին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն գրանցելու, «Մոբիդրամ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Վարդանանց» մասնաճյուղը հաշվառումից հանելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՎԱԼԳԵ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելու, «Մամմա Միյա» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման, «Աիդա-Կարին» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության իրականացման, ինչպես նաև «Իմէքս Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «ԻԴՐԱՄ» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպության մի շարք մասնաճյուղեր հաշվառելու, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Քաջազնունի» մասնաճյուղը գրանցելու, ինչպես նաև 1 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 34Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 26-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 30-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 31-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 32-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգը» և «Գրավատնային գործունեության լիցենզիայի ձևը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 738-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

23 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Կարեն-5» արտադրական կոոպերատիվին (որոշում թիվ 28Ա):
- ***Գրանցվել է*** «Կուբ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերությունը և ***տրամադրվել*** ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա (որոշում թիվ 33Ա):
- ***Հաշվառումից հանվել է*** «ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Վարդանանց» մասնաճյուղը (որոշում թիվ 37Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «ՎԱԼԳԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 38Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Մամմա Միյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման և «Աիդա-Կարին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաները (որոշումներ թիվ 39Ա, 40Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 41Ա):
- ***Հաշվառվել են*** «ԻԴՐԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Գորիս», «Արտաշատ», «Իջևան» և «Աբովյան» մասնաճյուղերը (որոշում թիվ 42Ա):
- ***Գրանցվել է*** «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Քաջազնունի» մասնաճյուղը (որոշում թիվ 1/62Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/78Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 34Ա որոշմամբ 2017 թ. փետրվարի 15-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 20-րդ, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգ»-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգը լրացնել 22.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«22.1. Սույն կանոնակարգի 27-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված բարձր ռիսկի չափանիշի առկայության դեպքում հաշվետվություն տրամադրող անձը ռիսկը կարող է գնահատել միջին՝ հաշվի առնելով Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված կարգով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի բացահայտման և գնահատման արդյունքները, եթե համապարփակ և փաստաթղթավորված վերլուծության արդյունքում հանգում է հիմնավոր եզրակացության, որ այդ ռիսկերը արդյունավետորեն կառավարվում են և զսպված են: Սույն կետով նախատեսված վերլուծության արդյունքները հաշվետվություն տրամադրող անձը սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված կարգով ներկայացնում է լիազոր մարմնին:»,

2) Կանոնակարգի 23-րդ կետում «բացառությամբ սույն կանոնակարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքի» բառերը փոխարինել «բացառությամբ սույն կանոնակարգի 22.1 կետով և 24-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերի» բառերով,

3) Կանոնակարգի 37-րդ կետում «պետք է ձեռնարկվեն ներքին իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ, բայց ոչ ուշ, քան» բառերը փոխարինել «բացառությամբ սույն կանոնակարգի 41.1-րդ կետով սահմանված դեպքերի, պետք է ձեռնարկվեն ոչ ուշ, քան.» բառերով,

4) Կանոնակարգի 38-րդ կետում «կատարվում է ներքին իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ, բայց ոչ ուշ, քան» բառերը փոխարինել «բացառությամբ սույն կանոնակարգի 41.1-րդ կետով սահմանված դեպքերի, կատարվում է ոչ ուշ, քան.» բառերով,

5) Կանոնակարգի 41-րդ կետում «որոնց իրականացման՝ սույն կանոնակարգի 37-րդ և 38-րդ կետերով նախատեսված պարբերականությունը սահմանվում է ներքին իրավական ակտերով, բայց ոչ ուշ, քան» բառերը փոխարինել «բացառությամբ սույն կանոնակարգի 41.1-րդ կետով սահմանված դեպքերի, իրականացվում են ոչ ուշ, քան.» բառերով,

6) Կանոնակարգը լրացնել 41.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«41.1. Հաշվետվություն տրամադրող անձը կարող է իր ներքին իրավական ակտերով սահմանել այլ ժամկետներ, քան սահմանված են սույն կանոնակարգի 37-րդ, 38-րդ և 41-րդ կետերով՝ հաշվի առնելով Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված կարգով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի բացահայտման և գնահատման արդյունքները, եթե համապարփակ և փաստաթղթավորված վերլուծության արդյունքում հանգում է հիմնավոր եզրակացության, որ այդ ռիսկերը արդյունավետորեն կառավարվում են և զսպված են:

Սույն կետով նախատեսված վերլուծության արդյունքները հաշվետվություն տրամադրող անձը սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված կարգով ներկայացնում է լիազոր մարմնին:»,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. փետրվարի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.02.2017 թ. (ՀՀՊՏ N8 (577), 3.03.2017):

7) Կանոնակարգի 55-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ ներքին դիտարկումների մարմնի գործառույթը վերապահված է ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ աշխատակցին, ներքին դիտարկումների մարմնի գործունեության մասով աուդիտը պետք է իրականացվի հաշվետվություն տրամադրող անձի այլ աշխատակցի կամ ստորաբաժանման կողմից:»,

8) Կանոնակարգի 56-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ սույն կետով նախատեսված ուսումնասիրության իրականացման պարտականությունը դրված է հաշվետվություն տրամադրող անձի ներքին դիտարկումների մարմնի վրա, ներքին դիտարկումների մարմնի գործունեության համապատասխանության մասով ուսումնասիրությունը պետք է իրականացվի հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված այլ աշխատակցի կամ ստորաբաժանման կողմից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 փետրվարի 2017 թ., N 26-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարելավել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղեր հիմնելու հետ կապված հարաբերությունները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ, 22-րդ և 28-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգ 1-ի 42-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «ընդ որում, այն պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 12-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ» բառերը,
2) Կանոնակարգ 1-ի 42-րդ կետի 3-րդ ենթակետում «Հավելված 11-ի» բառերը փոխարինել «Հավելված 44-ի» բառերով,
3) Կանոնակարգ 1-ը 118-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 118.1-րդ կետով.

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. փետրվարի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.02.2017 թ. (ՀՀԳՏ N8 (577), 3.03.2017):

«118.1. Սույն կանոնակարգով սահմանված որակավորման ստուգումը պարտադիր չէ բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հիմնվող մասնաճյուղի ղեկավարների համար: Ընդ որում, բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հիմնվող մասնաճյուղի ղեկավարները համարվում են որակավորում ստացած բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ հիմնելուն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը տալու պահից:»,

4) Կանոնակարգ 1-ի 165.1-րդ կետը «118-րդ» բառից հետո լրացնել «, 118.1-րդ» բառով,

5) Կանոնակարգ 1-ի 165.1-րդ կետը 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետով.

«7) բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հիմնվող մասնաճյուղի կառավարիչ:»,

6) Կանոնակարգ 1-ի 166-րդ կետը «սույն կանոնակարգի 118-րդ կետի պահանջներին բավարարող բանկի մասնաճյուղի ղեկավարին» բառերից հետո լրացնել «, սույն կանոնակարգի 118.1-րդ կետի պահանջներին բավարարող ղեկավարին» բառերով,

7) Կանոնակարգի 1-ի 171-րդ կետում «117-րդ կետով» բառերը փոխարինել «117-րդ և 118.1-րդ կետերով» բառերով,

8) Կանոնակարգ 1-ի 215-րդ կետի 1-ին ենթակետը «5 միլիոն ՀՀ դրամը» բառերից հետո լրացնել «(կամ դրան համարժեք արտարժույթը՝ հաշվարկված Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժութային շուկայում ձևավորված տվյալ օրվա միջին փոխարժեքի հիման վրա)» բառերով,

9) Կանոնակարգ 1-ի 215-րդ կետի 3-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հիմնվող մասնաճյուղերի համար մասնաճյուղը գլխամասի հետ կապող համակարգչային ցանցը միացվում է մասնաճյուղը օտարերկրյա պետությունում գրանցվելուց հետո՝ մասնաճյուղ հիմնելուն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը տրամադրելու մասին որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ այն մասնաճյուղերի համար, որոնք, ըստ սույն կանոնակարգի 121-րդ կետի, կարող են չունենալ գլխավոր հաշվապահ, համակարգչային ցանցը պետք է միացվի մասնաճյուղին վերջինիս՝ օտարերկրյա պետությունում գրանցման պահից:»,

10) Կանոնակարգ 1-ը 215-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 215.1-րդ կետով.

«215.1. Սույն կանոնակարգի 215-րդ կետով սահմանված պահանջները կարող են չկիրառվել բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հիմնվող մասնաճյուղերի նկատմամբ, եթե տվյալ օտարերկրյա պետության բանկային համակարգը կարգավորող մարմնի կողմից բանկի մասնաճյուղի տեխնիկական հագեցվածության նկատմամբ սահմանված են համանման պահանջներ:»:

2. Կանոնակարգ 1-ը լրացնել Հավելված 44-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
9 փետրվարի 2017 թ., N 30-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 30-Ն որոշմամբ

ՀԱՎԵԼՎԱԾ 44
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը» կանոնակարգ 1-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
☐ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները *(այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք)*
1.1. Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում) *(մասնաճյուղերի ղեկավարների համար նշել նաև ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի անվանումը և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությանը տրված կոդը)*
2. **Ղեկավար պաշտոն**
2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք կազմակերպությունում • մասնաճյուղի կառավարիչ • մասնաճյուղի գլխավոր հաշվապահ
2.3.(2.2)* Նկարագրեք Ձեր իրավասությունների և պատասխանատվությունների ոլորտները՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի
3. **Անձնական տվյալներ**
3.1. Անուն, ազգանուն, հայրանուն
3.2. Սեռ՝ • արական • իգական
3.3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
3.4. Ծննդավայր
3.5. Քաղաքացիություն
3.6. Նշեք՝ • Անձնագրի տվյալները • Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում) • Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
3.7. Նշեք՝ • Հանրային ծառայությունների համարանիշը • Կիրառելի չէ
3.8. Նշեք՝ • Հաշվառման վայր • Փաստացի բնակության վայր
3.9. Նշեք հեռախոսահամար՝ • բջջային • տնային
3.10. էլեկտրոնային փոստի հասցե

* *Պաշտոնական հրապարակման մեջ սպրդել է համարակալման վրիպակ:*

3.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները և դրանք կրելու ժամանակաշրջանները:

Անուն, ազգանուն, հայրանուն	Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (--թ-ից մինչև --թ.)	Ֆակուլ-տետը	Մասնագի-տությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

4.2. Ի՞նչ լեզուների եք տիրապետում

- հայերեն
- անգլերեն
- ռուսերեն
- այլ (նշել լեզուն)

4.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում՝ պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմա-կերպու-թյան անվանում	Կազմակեր-պության գործունեու-թյան ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախո-սահամար	Պաշտոնը, հիմնական պարտակա-նությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.4. Նշեք՝

Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ, ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից, ընդ որում, վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք, իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն,ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե

- Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1. Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ)

5.2. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:

- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ)

5.4. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ:
- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ)

5.5. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ)

5.6. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ

5.7. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ)

5.8. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:
- Ոչ
- Այո (ներկայացնել մանրամասներ)

5.9. Արդյո՞ք որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կամ տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 1 տարվա ընթացքում:
- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ)

5.10. Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից բանկի գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով:
- Ոչ,
- Այո (ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1. Նշեք.
- Այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմ-սերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2. Նշեք.

- Այն ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն:

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի բանկի գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Ֆինանսական կազմակերպության (ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձ չկա,
- Իրազեկ չէ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3. Նշեք.

- Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի բանկի գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կանոնակարգում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Անուն, ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը)	Անձնագրի տվյալները	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայր, հեռախոսահամար (բջջ. և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7.Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1. Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք:

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք:

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

7.3. Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ:

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ:

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1. Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (բացառությամբ 6.3 կետում նշված անձանց):

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայր, հեռախոսահամար (բջջ. և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջ. և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Ձեր կարծիքով արդյոք առկա են այլ կարևոր տեղեկություններ,
որոնք կցանկանայիք նշել:

- Ոչ
- Այո (ներկայացնել մանրամասներ)

10. Հավաստիացնում եմ, որ
ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական,
բ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար ՀՀ կենտրոնական բանկը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված
ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով խթանել երկարաժամկետ միջոցների ներգրավումը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Առևտրային բանկերի համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ:»,

2) Կանոնակարգի 24.1 կետից հանել «և 24.1.5» բառերը,

3) Կանոնակարգի 53.1 կետում՝

ա. «24.1.5» թիվը փոխարինել «24.1.4» թվով,

բ. «կարգով» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ, եթե վաղաժամկետ մարված կամ հետգնված փոխառության ամբողջ գումարն ուղղվում է բանկի կանոնադրական կապիտալի համալրմանը (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի տեսքով)» բառերը,

4) Կանոնակարգի 53.4 կետում «24.1.5» թիվը փոխարինել «24.1.4» թվով,

5) Կանոնակարգի Հավելված 3-ը 7.1.1 կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1.2 և 7.1.3 կետերով.

«7.1.2. Այն դեպքում, երբ պարտապանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 283-Ա հրամանով սահմանված կարգի ստացել է «օրինապահ հարկ վճարողի» հավաստագիր, վերջինիս գծով առկա պահանջների նկատմամբ կիրառվում են հետևյալ դրույթները.

1) պարտապանին տրամադրված արտարժութային ակտիվների նկատմամբ կիրառվում են սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված Աղյուսակ 1-ի՝ համապատասխան դրամային ակտիվների համար սահմանված ռիսկի կշիռները,

2) պարտապանին տրամադրված դրամային ակտիվների նկատմամբ կիրառվում են սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված Աղյուսակ 1-ի՝ դրամային ակտիվների համար սահմանված ռիսկի կշիռներից 50 տոկոսով ցածր ռիսկի կշիռներ, բացառությամբ հետևյալ դեպքերի.

ա. եթե սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված Աղյուսակ 1-ի համաձայն դրամային ակտիվների համար սահմանված է 50% ռիսկի կշիռ, ապա «օրինապահ հարկ վճարողի» հավաստագիր ունեցող պարտապանի հանդեպ համապատասխան պահանջի նկատմամբ կիրառվում է 35% ռիսկի կշիռ,

բ. եթե սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված Աղյուսակ 1-ի համաձայն դրամային ակտիվների համար սահմանված է 75% ռիսկի կշիռ, ապա «օրինապահ հարկ վճարողի» հավաստագիր ունեցող պարտապանի հանդեպ համապատասխան պահանջի նկատմամբ կիրառվում է 50% ռիսկի կշիռ:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. փետրվարի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.02.2017 թ. (ՀՀԳՏ N8 (577), 3.03.2017):

7.1.3. Սույն հավելվածի 7.1.2-րդ կետով նախատեսված դրույթները չեն տարածվում այն ակտիվների վրա, որոնք բավարարում են սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված Աղյուսակ 1-ի 6.30-րդ տողի պայմաններին:»,

6) Կանոնակարգի Հավելված 11-ի 2-րդ և 3-րդ կետերը ««Ֆրանկֆուրտ Սքուլ Ֆայնանշլ Սերվիսիս ՋիէմԲիէյջ» (Frankfurt School Financial Services GmbH)» բառերից հետո լրացնել «, «Աթլանթիկ Ֆորֆեյթինգ էյՋի» (Atlantic Forfaiting AG), «Գլոբալ Փարթներշիփ Ֆանդ էՍ.էՅ, ՍԻՔԱՎ-ՍԻՖ» (Global Partnership fund S.A., SICAV-SIF), Առևտրի և զարգացման սևծովյան բանկի (Black Sea Trade and Development Bank)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
9 փետրվարի 2017 թ., N 31-Ն

«Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգը» և «Գրավատնային գործունեության լիցենզիայի ձևը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 738-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել գրավատնային գործունեության լիցենզավորման ընթացակարգերը,

հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել
   1.1. «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգը»՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է),
   1.2. «Գրավատնային գործունեության լիցենզիայի ձևը»՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի ««Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգը» և «Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիայի ձևը» հաստատելու մասին» թիվ 738-Ն որոշումը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
9 փետրվարի 2017 թ., N 32-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 32-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

2. Հայտատուն գրավատնային գործունեության լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Հայտ՝ համաձայն սույն Կարգի Հավելված 1-ի,
2) Հայտատուի վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն սույն Կարգի Հավելված 2-ի,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. փետրվարի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.02.2017 թ. (ՀՀԳՏ N8 (577), 3.03.2017):

3) Գրավատան տարածքի (առկայության դեպքում նաև՝ մեծածավալ իրեր հանդիսացող գրավադրված (ի պահ հանձնված) գույքի պահպանման տարածքի) սեփականության, վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման իրավունքի վկայականի պատճենը: Տարածքի (առկայության դեպքում՝ նաև մեծածավալ իրերի պահպանման տարածքի) վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը,
4) Հայտատուի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված վարկավորման ընդհանուր պայմանները (2 օրինակից),
5) Փոքրածավալ իրեր հանդիսացող, գրավադրված (ի պահ հանձնված) գույքը պահպանելու համար գրավատան տարածքում գտնվող երկաթբետոնյա պատերով (ծածկով) առանձնացված սեյֆում չհրկիզվող պահարան (պահարաններ) ունենալու մասին հայտարարագիրը՝ համաձայն սույն Կարգի Հավելված 3-ի, կամ նշված գույքը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում պահպանելու մասին նշված բանկի և հայտատուի միջև կնքված պայմանագրի պատճենը,
6) Գրավատան տարածքի (առկայության դեպքում՝ նաև մեծածավալ իրերի պահպանման տարածքի) պաշտպանությունը պահպանիչ (անվտանգության) ահազանգման համակարգով ապահովելու մասին հայտատուի և համապատասխան կազմակերպության միջև կնքված պայմանագրի պատճենը,
7) Գրավատան տարածքը սեփական ուժերով պաշտպանելու նպատակով աշխատանքային ժամերին պահպանության ծառայություն իրականացնող և իր (իրենց) համազգեստով նկատելիորեն տարբերվող գրավատան աշխատակցի (աշխատակիցների) առկայության վերաբերյալ հայտարարագիրը՝ համաձայն սույն Կարգի Հավելված 4-ի, կամ գրավատան տարածքում անվտանգությունն ապահովելու մասին հայտատուի և համապատասխան կազմակերպության միջև կնքված պայմանագրի պատճենը,
8) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայության հետ կնքված պայմանագրի պատճենն առ այն, որ գրավատան հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգը միացված է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը (նշված ծառայությունը տվյալ տարածքում հասանելի լինելու դեպքում): Նշված ծառայությունը տվյալ տարածքում հասանելի չլինելու դեպքում տարածքում պետք է առկա լինի հրդեհի ազդարարման ինքնաշխատ շուրջօրյա գործուն համակարգ,
9) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության հետ կնքված՝ գրավ և ի պահ ընդունված գույքը բնական աղետներից, հրդեհից, կողոպուտից, գողությունից և ավազակային հարձակումից ապահովագրելու վերաբերյալ պայմանագրի պատճենը, ինչպես նաև ապահովագրավճարի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը,
10) Տեղեկանք՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ:

3. Սույն Կարգի 2-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային կրիչով, պատվիրված նամակով կամ առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով:

4. Սույն Կարգի 2-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում լիցենզիան տրամադրելու մասին կամ մերժում է ներկայացված հայտը: Կենտրոնական բանկը լիցենզիա տրամադրելու կամ մերժելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում որոշման օրինակը տրամադրում է հայտատուին առձեռն կամ ուղարկում է փոստով: Լիցենզիա ստանալու հայտը բավարարելու որոշում ընդունելու դեպքում լիցենզիան հայտատուին է տրամադրվում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրքի առաջին տարեկան վճարումը կատարելուց և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Լիցենզիան համարվում է տրված պետական տուրքի առաջին վճարումը հավաստող փաստաթուղթը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրը: Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին տալիս է լիցենզիա՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ձևի:

5. Եթե հայտը քննելու ընթացքում հայտում և (կամ) դրան կից փաստաթղթերում ներկայացված տեղեկություններում տեղի են ունեցել փոփոխություններ, ապա հայտատուն ներկայացնում է նաև փոփոխված տեղեկությունները՝ մինչև Կենտրոնական բանկի կողմից հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման կայացումը: Եթե ներկայացված հայտը կամ դրան կից փաստաթղթերը թերի են, ապա

հայտատուն իրավունք ունի մինչև Կենտրոնական բանկի կողմից հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման կայացումը ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Սույն կետում նշված դեպքերում հայտը Կենտրոնական բանկ ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և (կամ) պահանջվող փաստաթղթերը կենտրոնական բանկ ներկայացնելու օրը:

6. Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է ներկայացված հայտը «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հիմքերով: Հայտը մերժելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ նշվում են հայտի մերժման հիմքերը:

7. Հայտի մերժման կամ բավարարման դեպքում Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերը չեն վերադարձվում:

8. Կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիան ստանալուց հետո գրավատունը գործունեությունը փաստացի սկսելու դեպքում նախօրոք Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հայտարարություն գրավատան գործունեությունը սկսելու մասին՝ համաձայն սույն Կարգի Հավելված 5-ի:

9. Լիցենզիայի հայտը մերժելու դեպքում լիցենզավորվող անձն իրավունք ունի լիցենզիա ստանալու նոր հայտ ներկայացնել սույն գլխով սահմանված կարգով:

10. Գրավատնային գործունեության լիցենզիայում նշված վայրից այլ վայրում գրավատնային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է ստանալ առանձին լիցենզիա՝ սույն կարգին համապատասխան:

ԳԼՈՒԽ 3. ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Գրավատան անվանման, գործունեության վայրի (այդ թվում՝ մեծածավալ իրերի պահպանման վայրի՝ առկայության դեպքում), ինչպես նաև իրավաբանական անձի գտնվելու վայրի (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման վայրի) փոփոխման դեպքում գրավատունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման հայտ՝ համաձայն սույն Կարգի Հավելված 1-ի:

12. Գրավատան անվանման կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման վայրի) փոփոխության դեպքում վերաձևակերպման հայտի հետ միասին Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) Սույն Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերում ներկայացված տեղեկատվության փոփոխված տարբերակները,
2) Վարկավորման պայմանները՝ փոփոխության դեպքում,
3) Պետական տուրքի վճարման անդորրագիր,
4) Լիցենզիայի բնօրինակը:

13. Գրավատան գործունեության վայրի (այդ թվում՝ մեծածավալ իրերի պահպանման վայրի՝ առկայության դեպքում) փոփոխման դեպքում վերաձևակերպման հայտի հետ միասին Կենտրոնական բանկ են ներկայացվում.

1) Սույն Կարգի 2-րդ կետի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ ենթակետերով պահանջվող փաստաթղթերը,
2) Վարկավորման պայմանները՝ փոփոխության դեպքում,
3) Պետական տուրքի վճարման անդորրագիրը,
4) Լիցենզիայի բնօրինակը:

14. Սույն գլխում նշված համապատասխան փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում լիցենզիան վերաձևակերպելու մասին կամ մերժում է ներկայացված հայտը: Կենտրոնական բանկը լիցենզիայի վերաձևակերպման հայտը բավարարելու կամ մերժելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում որոշման օրինակը և լիցենզիայի նոր օրինակը տրամադրում է հայտատուին առձեռն կամ ուղարկում է փոստով:

15. Գրավատնային գործունեության լիցենզիայի վերաձևակերպման հայտը մերժելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ նշվում են հայտի մերժման հիմքերը:

ԳԼՈՒԽ 4. ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

16. Գրավատնային գործունեության լիցենզիան օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում գրավատունը դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ դրա կրկնօրինակը ստանալու և կորստի մասին Կենտրոնական բանկի կայքում հրապարակելու համար: Դիմումի մեջ նշվում է լիցենզիայի կրկնօրինակ ստանալու պատճառը: Դիմումին կցվում է լիցենզիայի բնօրինակը (օգտագործման համար ոչ պիտանի

դառնալու դեպքում), ինչպես նաև լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

17. Կենտրոնական բանկը կորած կամ օգտագործման համար ոչ պիտանի դարձած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը գրավատանն է հանձնում սույն Կարգի 16-րդ կետով սահմանված բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

18. Լիցենզիայի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

19. Կորած լիցենզիան գտնելու դեպքում գրավատունը գտնված լիցենզիան վերադարձնում է Կենտրոնական բանկ:

ԳԼՈՒԽ 5. ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

20. Գրավատնային գործունեության լիցենզիայի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է Օրենքով սահմանված հիմքերով:

21. Լիցենզավորված անձի դիմումի հիման վրա գրավատնային գործունեության լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու համար գրավատունը Կենտրոնական բանկ է ներկայացնում դիմում՝ համաձայն սույն Կարգի Հավելված 6-ի:

22. Սույն Կարգի 21-րդ կետով սահմանված դիմումը ստանալու պահից 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին կամ մերժում է ներկայացված դիմումը: Կենտրոնական բանկը դիմումը բավարարելու կամ մերժելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում որոշման օրինակը տրամադրում է դիմումատուին առձեռն կամ ուղարկում է փոստով:

23. Սույն Կարգի 21-րդ կետով սահմանված դիմումը մերժելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ նշվում են դիմումի մերժման հիմքերը:

24. Գրավատնային գործունեության լիցենզիայի գործողությունը դադարելու դեպքում լիցենզիայի բնօրինակը վերադարձվում է Կենտրոնական բանկ:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 32-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում
գրավատնային գործունեության լիցենզավորման կարգի»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ՝

_____

ՀԱՅՏ

Հարգելի _____,

Խնդրում եմ.

☐ տրամադրել գրավատնային գործունեության լիցենզիա,

☐ վերաձևակերպել գրավատնային գործունեության լիցենզիան, կապված՝

☐ գրավատան անվանափոխության հետ (_____),
(գրանցման ամսաթիվ)

☐ գրավատան գործունեության վայրի (այդ թվում՝ մեծածավալ իրերի պահպանման վայրի՝ առկայության դեպքում) փոփոխության հետ,

☐ իրավաբանական անձի գտնվելու վայրի/անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրի փոփոխության հետ

(_____):
(գրանցման ամսաթիվ)

Հավաստիացնում եմ, որ ներկայացվող փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության:

Լիցենզավորվող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____
օր/ամիս/տարի

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 32-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում
գրավատնային գործունեության լիցենզավորման կարգի»

Հայտատուի վերաբերյալ տեղեկատվություն

1. Հայտատուի անվանումը (անուն ազգանունը՝ ԱՁ-ի դեպքում)՝
2. Հարկ վճարողի հաշվառման համարը՝
3. Պետական գրանցման/հաշվառման համարը և ամսաթիվը՝
4. Հայտատուի գտնվելու վայրը՝
5. Հայտատուի գտնվելու վայրի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի, պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն՝ առկայության դեպքում՝
6. Հայտատուի գործունեության վայրը՝
7. Հայտատուի գործունեության վայրի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն՝
8. Տնօրենի անունը, ազգանունը, հայրանունը (լրացվում է իրավաբանական անձի համար)՝
9. Տնօրենի անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալներ (լրացվում է իրավաբանական անձի համար)՝
10. Տնօրենի հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (լրացվում է իրավաբանական անձի համար)՝
11. Այլ տեղեկատվություն

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Լիցենզավորվող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____

օր/ամիս/տարի

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 32-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում
գրավատնային գործունեության լիցենզավորման կարգի»

Հայտարարագիր

Փոքրածավալ իրեր հանդիսացող, գրավադրված (ի պահ հանձնված) գույքը պահպանելու համար գրավատան տարածքում գտնվող երկաթբետոնյա պատերով (ծածկով) առանձնացված սենյակում չհրկիզվող պահարան (պահարաններ) ունենալու վերաբերյալ

Սույնով հայտարարում ենք, որ _____

գրավատան անվանումը, կազմակերպաիրավական ձևը

գրավատունը փոքրածավալ իրեր հանդիսացող, գրավադրված (ի պահ հանձնված) գույքը պահպանելու համար ունի գրավատան տարածքում գտնվող երկաթբետոնյա պատերով (ծածկով) առանձնացված սենյակ ու չհրկիզվող պահարան (պահարաններ):

Լիցենզավորվող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____

օր/ամիս/տարի

Հավելված 4

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 32-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգի»

Հայտարարագիր

(Պահպանության ծառայություն իրականացնող գրավատան աշխատակցի (աշխատակիցների) առկայության վերաբերյալ)

Սույնով հայտարարում ենք, որ _____

գրավատան անվանումը, կազմակերպաիրավական ձևը

գրավատունը աշխատանքային ժամերին ապահովելու է գրավատան տարածքի անվտանգությունը իր (իրենց) համազգեստով նկատելիորեն տարբերվող գրավատան աշխատակցի (աշխատակիցների) միջոցով:

Լիցենզավորվող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____

օր/ամիս/տարի

Հավելված 5

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 32-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգի»

«_____» գրավատուն

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցե _____

Հեռախոսի համար _____

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տեղեկացնում ենք Ձեզ, որ գրավատունը ____/____/____/____-ից.

(օր) (ամիս) (տարի) (ժամ)

սկսում է իր գործունեությունը:

Լիցենզավորվող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____

օր/ամիս/տարի

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի փետրվարի 3-ի թիվ 32-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում
գրավատնային գործունեության լիցենզավորման կարգի»

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ՝

_____

ԴԻՄՈՒՄ

Հարգելի _____,

Խնդրում եմ

☐ կասեցնել գրավատնային գործունեության լիցենզիայի գործողությունը:

_____

(Նշել լիցենզիայի գործողության կասեցման պատճառը, վարկային պորտֆելի մեծությունը դիմումի ներկայացման օրվա դրությամբ, առաջարկվող կասեցման ժամկետը)

_____
_____
_____
_____:

☐ դադարեցնել գրավատնային գործունեության լիցենզիայի գործողությունը:

_____

